ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 00 67, էլ. փոստ՝ meo@ypc.am

Դիտորդ մարմնի կազմը

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
Սուրեն ԴԵՀԵՐՅԱՆ
Արսեն ԽԱՌԱՏՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մարգարիտա ՄԻՆԱՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Արեւիկ ՍԱՀԱԿՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Վիգեն ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

«Հրապարակ» օրաթերթում լույս տեսած «Փաշինյանը դավաճանու՞մ է արդյոք կնոջը» հոդվածի կապակցությամբ

Ա. ՓԱՍՏԵՐ

1. 2025 թվականի հունիսի 6-ին «Հրապարակ» օրաթերթի համանուն կայքում լույս է տեսել «Փաշինյանը դավաճանու՞մ է արդյոք կնոջը» վերնագրով հոդված, որում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին վարկաբեկող կապ է վերագրվում իր՝ ենթադրաբար նախկին աշխատակիցներից մեկի հետ: Ընդ որում, հեղինակը շեշտում է, որ իր հրապարակման առիթը Հայ առաքելական եկեղեցու վերնախավի դեմ Փաշինյանի՝ այդ օրերին սկսված արշավն է: «Իհարկե, մենք նման բան չէինք հրապարակի, եթե չլիներ երկրի ղեկավարի արշավը Վեհափառ հայրապետի դեմ, բայց, եթե թիվ մեկ պաշտոնյան կարող է ասել՝ «այսպիսի լուրեր են պտտվում, թող Կաթողիկոսը հերքի», մենք էլ կարող ենք նույն հարցադրումը անել», - մասնավորապես ասվում է հոդվածի մեջ:
2. 2025 թվականի հուլիսի 4-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայց է ներկայացրել Երեւանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ի՝ պահանջելով պատասխանողին պարտավորեցնել հրապարակայնորեն հերքել հիշյալ հոդվածում զրպարտություն համարվող տվյալները, նաեւ լրատվամիջոցից հօգուտ հայցվորի բռնագանձել 1 միլիոն ՀՀ դրամ՝ որպես զրպարտությամբ պատճառված վնասի փոխհատուցում:
3. 2025-ի հուլիսի 31-ին Տեղեկատվական վեճերի խորհուրդը դեպքի առնչությամբ կարծիք է հրապարակել՝ հոդվածը գնահատելով ՀՀ օրենսդրության տեսանկյունից, նաեւ տեսակետ հայտնելով կառավարության ղեկավարի՝ լրատվամիջոցի դեմ դատական հայց ներկայացնելու իրավաչափության ու նպատակահարմարության վերաբերյալ:
4. ՏՎԽ-ն նաեւ դիմել է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմին՝ հայցելով ԴՄ փորձագիտական կարծիքը հոդվածի՝ լրագրողական էթիկայի նորմերին համապատասխանության առումով:

Բ. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

1. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր

Հոդված 12. Ոչ ոք չի կարող ենթարկվել իր անձնական ու ընտանեկան կյանքում կամայական միջամտության, իր տան, իր նամակագրության կամ իր պատվի ու հեղինակության նկատմամբ կամայական ոտնձգությունների: Յուրաքանչյուր ոք ունի նման միջամտությունից կամ ոտնձգությունից օրենքի պաշտպանության իրավունք:

2. Հայաստանի Հանրապետության սահմանադրություն

Հոդված 31. Մասնավոր եւ ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր եւ ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:

3. Հայաստանի լրագրողների եւ լրատվամիջոցների էթիկայի կանոնագիր

Խմբագրությունը եւ լրագրողը պարտավոր են

1.1. Մինչեւ հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը, չկոծկել եւ չխեղաթյուրել փաստերը, չհրապարակել ակնհայտ կեղծ տեղեկություններ:

1.4. Փաստերի եւ տեղեկությունների շարադրանքը հստակ սահմանազատել կարծիքներից, վերլուծություններից եւ մեկնաբանություններից:

1.5. Վերլուծություններ եւ մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի եւ հավաստի տեղեկությունների վրա:

4.1. Պաշտպանել մարդկանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, ներառյալ՝ հարգանքն անձնական եւ ընտանեկան կյանքի, բնակարանի, սեփականության, առողջության եւ նամակագրության նկատմամբ: Միայն հասարակական շահի առկայությամբ կամ պաշտպանության անհրաժեշտությամբ կարող է արդարացվել բարձրաստիճան պաշտոնատար անձանց, հասարակական գործիչների, իշխանության կամ հասարակական ուշադրության ձգտող մարդկանց անձնական կյանքին վերաբերող տեղեկությունների հրապարակումը:

4.2. Երբ խոսքի ազատությունը հակասության մեջ է մտնում մարդու մյուս հիմնարար իրավունքների հետ, լրատվամիջոցն ինքնուրույն է վճռում, թե ինչին տալ նախապատվությունը, եւ պատասխանատվություն է կրում իր վճռի համար:

6.3. Ընդունել սեփական սխալները եւ պատրաստակամ լինել՝ ուղղելու դրանք:

Գ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը,

Տեղեկատվական վեճերի խորհրդի առաջարկով ուսումնասիրելով խնդրո առարկա հոդվածը,

Հաշվի առնելով ՏՎԽ 31.07.2025թ. կարծիքը եւ քննելով «Հրապարակ» օրաթերթում լույս տեսած հոդվածում առկա տեղեկությունները դրա հրապարակման ժամանակահատվածում գոյություն ունեցող հասարակական-քաղաքական իրադրության համատեքստում,

ներկայացնում է սույն Փորձագիտական կարծիքը, որով արձանագրում է.

- Հոդվածում բերված տեղեկությունները ՀՀ վարչապետի՝ իր աշխատակիցներից մեկի հետ տարիներ առաջ իբր ունեցած վարկաբեկող կապի եւ դրանից բխող այլ հանգամանքների մասին, հիմնված են անանուն աղբյուրների վրա: Հրապարակման հեղինակը չի ներկայացրել որեւէ փաստ կամ աղբյուր, որով կհիմնավորեր այդ տեղեկությունների հավաստիությունը կամ կհուշեր, որ դրանց հավաստիությունը ստուգելու ուղղությամբ քայլեր են արվել: Այս իմաստով, հոդվածը հակասության մեջ է մտնում Կանոնագրի 1.1, 1.4 եւ 1.5 կետերի պահանջների հետ:
- Հոդվածի շարադրանքից («…մենք նման բան չէինք հրապարակի, եթե չլիներ երկրի ղեկավարի արշավը Վեհափառ հայրապետի դեմ…») պարզ է դառնում, որ դրա միջոցով հեղինակը (լրատվամիջոցը) փորձ է արել գնահատելու Նիկոլ Փաշինյանի հրապարակային հայտարարությունները Ամենայն Հայոց կաթողիկոսի եւ այլ բարձրաստիճան հոգեւորականների անձնական կյանքի վերաբերյալ: Այս առումով, հոդվածում «մամուլում տեղ գտած» «օդում կախված լուրերի» անվան տակ ներկայացվող տեղեկությունները կարելի կլիներ որակել ոչ թե (կամ ոչ այնքան) որպես փաստական տվյալ, այլ ՀԱԵ վերնախավի մասին վարչապետի հայտարարություններին համարժեք պատասխան, որը նպատակ է ունեցել սադրիչ ձեւակերպումների, չափազանցությունների ու ալեգորիաների միջոցով առաջ մղել թեմայի շուրջ հանրային բանավեճը եւ ցույց տալ, որ ՀՀ վարչապետի հրապարակային հայտարարությունները կաթողիկոսի անձնական կյանքի վերաբերյալ նույնչափ տեղին չեն, որչափ վիճահարույց են հոդվածում հրապարակված արտահայտությունները ՀՀ վարչապետի անձնական կյանքի մասին, ինչպես նշվում է ՏՎԽ կարծիքի մեջ:
- Նման նպատակը կարող է արդարացված համարվել նաեւ մասնագիտական էթիկայի տեսակետից, եթե պահպանվում է համաչափության սկզբունքը: Մի կողմից լրագրողական հնարքներին ծանոթ ընթերցողին հասկանալի է, որ հրապարակման հիմնական նպատակը ոչ թե Նիկոլ Փաշինյանի անձնական կյանքի մասին փաստեր տարածելն է, այլ վարչապետի՝ հանրային կարեւորություն ունեցող վարքագծի նկատմամբ քննադատական վերաբերմունք ձեւավորելը: Սակայն լրատվամիջոցի համար կարեւոր է հաշվի առնել լսարանի կողմից

տարբեր ընկալումները, այդ թվում հենց ենթադրյալ կոնկրետ փաստերի վրա սեւեռվելը։ Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ Դիտորդ մարմինը համարում է, որ հոդվածագիրն իր նպատակին հասնելու համար ընտրել է անհամարժեք եւ լրագրողական էթիկայի տեսանկյունից անընդունելի ձեւ, որովհետեւ ոչ միայն թիրախավորել է ՀՀ վարչապետի անձնական կյանքը, այլ նաեւ եւ հատկապես երրորդ անձին վարկաբեկող տեղեկություններ է հրապարակել։ Այս իմաստով, «Հրապարակի» խնդրո առարկա հոդվածը հակասության մեջ է մտնում Կանոնագրի 4.1 կետի հետ։

Դիտորդ մարմինն Ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցներին հորդորում է տարածել սույն Կարծիքը, նաեւ հույս է հայտնում, որ «Հրապարակ» օրաթերթը կհետեւի նրանց օրինակին։

Ընդունվել է 2025 թ. սեպտեմբերի 16-ին,
ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետեւյալ կազմով

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
«Նյումեգ» հրատարակչության գլխավոր խմբագիր
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Երեւանի մամուլի ակումբի պատվավոր նախագահ
Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
«Մեդիամաքս» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր
Վիգեն ՍԱՐԳՍՅԱՆ
ԵՄԱ մասնագիտական էթիկայի հանձնաժողովի նախագահ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Իրավաբան
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
Ռեժիսոր, Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի պրոֆեսոր
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն
Սուրեն ԴԵՀԵՐՅԱՆ
Ampop.am-ի հիմնադիր խմբագիր
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ
Մարգարիտա ՄԻՆԱՍՅԱՆ
«Ցայգ» հեռուստաընկերության տնօրեն
Արսեն ԽԱՌԱՏՅԱՆ
«Ալիք Մեդիա» լրատվական-վերլուծական կայքի հիմնադիր
Արեւիկ ՍԱՀԱԿՅԱՆ
Factor TV-ի գործադիր տնօրեն
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Հանրային հեռարձակողի խորհրդի անդամ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Վանաձորի «Լոռի» ՀԸ գործադիր տնօրեն
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Արմավիրի «ԱԼՏ» հեռուստաընկերության խմբագիր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձեւավորել են Ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցները, որոնք այս պահին 94-ն են: ԴՄ-ն ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնության համաժողովում, 2024 թվականի մայիսի 18-ին: